ՀՀ Գեղարքունիքի մարզի Ծակքար բնակավայրի հանդիսությունների սրահի կառուցման ինչպես նաև Ծակքար բնակավայրի մշակույթի կենտրոնի մասնակի վերանորոգման աշխատանքների ձեռքբերման համար ԳՄՄՀ-ՀԲՄԱՇՁԲ-24/09 ծածկագրով հայտարարվել է հրատապ բաց մրցույթ 2024 թվականի օգոստոսի 6-ին: Վերոնշյալ աշխատանքները միջգերատեսչական հանձնաժողովը չի հաստատել և չի հաստատվելու 2024 թվականի ընթացքում, հետևաբար դադարում է գոյություն ունենալ գնման պահանջը և պետք է ընթացակարգը հայտարարել չկայացած՝ ըստ գնումների մասին ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, որի համար անհրաժեշտ է ավագանու որոշում՝ ըստ Կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի 526-ն որոշման 58-րդ կետի:

58. Եթե գնման ընթացակարգի արդյունքում պայմանագիր չի կնքվում, ապա այդ ընթացակարգը չկայացած է հայտարարվում, և օրենքով սահմանված կարգով կազմակերպվում է գնման նոր ընթացակարգ: Օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի հիման վրա պետության կամ համայնքների կարիքների համար կազմակերպված գնման ընթացակարգը կարող է ամբողջությամբ կամ մասնակի չկայացած հայտարարվել՝ համապատասխանաբար Հայաստանի Հանրապետության կառավարության կամ համայնքի ավագանու, այլ պատվիրատուների դեպքում՝ ընդհանուր կառավարումն իրականացնող լիազորված մարմնի ղեկավարի, իսկ հիմնադրամների դեպքում՝ հոգաբարձուների խորհրդի որոշման հիման վրա:

Գնումների համակարգող՝ Էդվին Գրիգորյան